

տատու թիւններու եւ կազմակերպուեթիւններու ներքին ծալքերը: Ամբարեց փորձառութիւններ, որոնք թէ՛ անձին կատարելութեան նպաստամատոյց եղան եւ թէ՛ հասարակաց համար օգտակար: Այսպէս ամէն մասամբ զարգացաւ արթուն մտքով եւ ուսումնասէր եռանդով, որպէս զի Եկեղեցւոյ պայծառացուցիչ եւ ժողովուրդին լուսատու ըլլայ:

«Նորածեւ», «նորահանուկ» նկատուեցան անոր քարոզները հայրենիքին մէջ, «խարերայ», «Կեղծաւոր» ամբաստանուեցաւ իր «խոչորագէտաւ եւ պահեցող» կենցաղին համար, չգնահատուեցաւ իր շինարարական գործունէութիւնը. սպառնաց կաթողիկոսը «զամենայն եկեղեցիսդ, զոր դու շինեցեր, ի վերայ դիւտոյ քո քակեցից», նոյն իսկ սաստեց պահանջքով «եւ յայսմ աշխարհէ»: Կրճատեցին թշնամիները ստամոները անոր դէմ, բայց անիկա մնաց անշարժ իր տեղը, ինչպէս հսկայ ծառ մը որ ձգած է արմատները խոր՝ հայրենի հողին մէջ, աներկիւղ թէ հալածանքներու մէջ եւ թէ աքսորի սպառնալիքներու առաջ. «Զիա՞րդ ես մոռացայց զԱւետարանն Քրիստոսի կամ զաքսորանք որ վասն օրինացն Աստուծոյ եղեւ»: Երկիւղ չազդեցին նաեւ պարսիկ բռնակալին սպառնալիքները, ոչ երկաթեայ կապանքներն, ոչ մահուան արհաւիրքն եւ ոչ ալ ծանր տուգանքը: Անոնք հարուածներ էին, որոնք կ'իջնային հրաշէկ երկաթին վրայ ամբապնդելու անոր կարծրութիւնը: Ի վերջոյ բռնակալի խստասրտութիւնը տեղի